ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ — «Երկերի ժողովածու», հատոր 3, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 5500, 594 էջ, գինը՝ 1 ռ. 67 կ.

Այս ժողովածուի գիտական հրատարակության երրորդ հատորն ամփոփում է բանաստեղծի տպագրված և անտիպ հոդվածները, որոնք ամբողջական ձևով ներկայացվում են առաջին անգամ։

Հատորի մեջ նյութերը ընդգրկված են հետևյալ ենթաբաժիններում. հոդվածներ, գրախոսականներ, թատերախոսություններ և ուսումնասիրություններ։

Յուրաքանչյուր բաժնի ծանոթագրությունների ներածական մասում ամփոփ շարադրված են տվյալ շարքին վերաբերող ընդհանուր տեղեկություններ։

Համարյա նույն կառուցվածքն ունի հատորի երկրորդ՝ անտիպ նյութերի բաժինը, ուր ընդգրկված են Հովհաննիսյանի աշակերտական և ուսանողական շրջանի շարադրանքները։

Վերջապես, հատուկ ուշադրության է արժանի Շեքսպիրի վերաբերյալ բանաստեղծի ուսումնասիրությունը, որը ցույց է տալիս ոչ միայն նրա բազմակողմանի ու խոր պատրաստությունը, այլև ինքնատիպ ու առողջ հայացքը Շեքսպիրի արվեստի նկատմամբ։

Հատորն ունի ծանոթագրություններ և անվանացանկ։

«Սովետահայ գրականության պատմություն», հատոր երկրորդ, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 5000, 774 էջ, գինը՝ 1 ռ. 80 կ.։

«Սովետահայ գրականության պատմության» երկրորդ հատորը, որ պատրաստել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սովետական գրականության սեկտորը, ընդգրկում է գրականության զարգացման ընթացքը Հայրենական մեծ պատերազմի (1941—1945) և հետպատերազմյան (1945—1964) ժամանակաշրջանում։

«ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՏԵՐՏԵՐՅԱՆ» — ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 72 էջ, գինը՝ 10 կ.։

Այս բրոշյուրը «Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները» սերիայի 11-րդ համարն է, որը նվիրված է հայագիտության մեծ ներկայացուցիչ գրականագետ և բազմավաստակ մանկավարժ Արսեն Տերտերյանին։

Բրոշյուրի ներածական մասը՝ ակադեմիկոս Ա. Հ. Տերտերյանի կյանքի և գիտական գործունեության համառոտ ակնարկը գրել է բանասիրական գիտությունների դոկտոր Հր. Թամրազյանը։ Մեծ գիտնականի աշխատությունների մատենագիտական ցանկը կազմել է Ռ. Ա. Բաբաջանյանը։

Բրոշյուրն ունի նաև Տերտերյանի մասին գրականության ցուցակ և նրա աշխատությունների այբբենական ցանկ։